ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"19" նոյեմբերի 2015թ. № 128-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.22 կետերով, 2015 թվականի նոյեմբերի 10-14 ընկած ժամանակահատվածում մարզի առանձին համայնքներում ուժեղ քամու հետևանքով պատճառված վնասների ծավալները ճշտելու և դրանց վերացմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներն օպերատիվ կազմակերպելու նպատակով, **կ ա ր գ ա դ ր ում ե մ.**

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ռ.Ավետիսյան	մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ (նախագահ)
Ա.Արզումանյան	աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Է.Մելքումյան	աշխատակազմի քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ
Ժ.Թունյան	աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ
Լ.Ներսիսյան	ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ (համաձայնեցվել է)

2. Հանձնաժողովին՝
1) հինգօրյա ժամկետում ուսումնասիրել աղետի պատճառած վնասները և արդյունքները ներկայացնել քննարկման,
2) ուսումնասիրություններին մասնակից դարձնել համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:
3. Սույն կարգադրության կատարման վերահսկողությունը դնել ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ.Դավթյանի վրա:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2015թ. նոյեմբերի 19
ք. Կապան